ՀՀ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ Ֆ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Սրտանց շնորհավորում եմ Ձեր ծննդյան 80-րդ տարեդարձը:

Իբրև հասարակական և պետական գործիչ, Դուք Ձեր արժանի ավանդն ունեք մեր երկրի զարգացման գործում:

Մեծ են Ձեր ծառայությունները Հայաստանի գիտության զարգացման բնագավառում: Դուք, երկար տարիներ գլխավորելով Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը, նշանակալի ավանդ եք ներդրել ռադիոէլեկտրոնային արդյունաբերության ոլորտում:

Անուրանալի է նաև Ձեր վաստակը Հայաստանի տնտեսության առաջընթացում, մասնավորապես՝ Հայաստանի Մինիստրների խորհուրդը ղեկավարելու տարիներին:

Այսօր Գիտությունների ազգային ակադեմիան, ի դեմս Ձեզ, ունի փորձառու և գործուն ղեկավար, գիտական առաջընթացի գործի նվիրյալ:

Շնորհավորելով հոբելյանի առթիվ մաղթում եմ Ձեզ երկար կյանք, քաջառողջություն և նորանոր հաջողություններ Ձեր բարձր առաքելության մեջ:

ՌՈՒԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ
ՀՀ Նախագահ

ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆ

Լրացավ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ, հաշվողական տեխնիկայի և կառավարման ավտոմատացված համակարգերի բնագավառի խոշոր մասնագետ, ակադեմիկոս Ֆադեյ Տաճատի Սարգսյանի ծննդյան 80 տարին:

Ավելի քան 40 տարի ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը ակտիվորեն մասնակցում է Հայաստանի գիտական և հասարակական-քաղաքական կյանքին:

Ակադեմիկոս Ֆ. Սարգսյանին բնորոշ են մտքի պարզությունը, կշռադատված եզրահանգումները, հասունացած հիմնահարցերի նկատմամբ վերլուծական մոտեցումը, համարձակ ու ստեղծարար որոշումներ ընդունելը, պահպանողականությունն ու դոգմատիզմը մերժելը, նորին, առաջավորին մշտապես աջակցելը:

Շուրջ 17 տարի (1946–1963) աշխատելով ԽՍՀՄ պաշտպանության նախարարությունում՝ անմիջական մասնակցություն է ունեցել խորհրդային զինված ուժերի համար ռադիոլոկացիոն սպառազինության ստեղծման, արտադրության կազմակերպման և ներդրման գործին:

Գիտնականի և գիտության կազմակերպչի տաղանդը բացառիկ փայլով դրսևորվեց 1963–1977 թթ., երբ ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը գլխավորում էր Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական